

1.3. ՉՈՒՆԵՐ և սակագներ

Գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների 2005թ. հունվար-նոյեմբերին

(ճախորդ ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը շինարարության ճյուղում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս ⁶⁾
Հունվար	105.4	100.5	100.7	97.3	98.2	100.3
Փետրվար	99.3	94.8	99.9	98.9	98.4	100.6
Մարտ	99.1	101.2	122.9	98.7	99.6	98.3
Ապրիլ	99.1	97.4	99.9	98.5	97.3	103.4
Մայիս	100.1	99.9	100.0	97.4	97.6	100.6
Հունիս	98.6	101.8	100.1	100.7	79.3	100.9
Հուլիս	95.5	96.3	100.1	99.5	81.8	101.1
Օգոստոս	98.6	102.4	101.0	106.0	88.0	103.0
Սեպտեմբեր	100.9	101.1	99.9	97.7	98.1	103.0
Հոկտեմբեր	100.1	98.2	100.9	99.4	102.4	97.8
Նոյեմբեր	101.1	100.8	91.1	101.0	102.5	99.1
2005թ. նոյեմբերը 2004թ. դեկտեմբերի նկատմամբ	97.6	94.3	114.9	94.8	91.9*	101.0*
2005թ. հունվար-նոյեմբերը 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ	100.7	108.9	118.8	89.2	89.3	106.7

*) 2005թ. նոյեմբերի և 2004թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է ճախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ը ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության մարզերում 400 անվանում ավարանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

²⁾ Գների դիտարկումը ՀՀ-ում կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով: Գների ինդեքսի հաշվարկը կատարվում է ժողովրդական ծյուղերի համամիութենական դասակարգչի (ԺՏԵՀ) համաձայն: Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին (ՏԳՏԴ) համապատասխան գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը մշակման փուլում է:

³⁾ Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:


⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնաառքումների դիտարկված սակագների հիման վրա:

⁵⁾ Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁶⁾ Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:


Գների, սակագների աճի տեմպերը 2004-2005թթ. հունվար-նոյեմբերին

(ճախորդ տարվա հունվար-նոյեմբերի նկատմամբ, %)




Արտարժուքային շուկա: 2005թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետության սպառողական և արժուքային շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի համապատասխանաբար 1.1% և 2.0% հավելաճ: Նոյեմբերին 2004թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գները և հաշվարկային փոխարժեքը նվազել են համապատասխանաբար 2.4% և 5.8%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել է նմանատիպ միտում. սպառողական գների և հաշվարկային փոխարժեքի նվազումը կազմել է համապատասխանաբար 0.3% և 11.1%: 2005թ. նոյեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային միջին փոխարժեքը կազմել է 458.27 դրամ, ինչը 8.8% ցածր է նախորդ տարվա նոյեմբերի համապատասխան ցուցանիշից (502.71 դրամ):

ՀՀ սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 2004-2005թթ. հունվար-նոյեմբերին
(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



Սպառողական գներ: 2005թ. սեպտեմբեր-նոյեմբերին ՀՀ սպառողական շուկայում գրանցվել է 2.2% ընդհանուր գնաճ, այդ թվում, նոյեմբերին հոկտեմբերի համեմատ գնաճը կազմել է 1.1%, ինչը մեծապես պայմանավորվել է պարենային որոշ ապրանքատեսակների գների սեզոնային փոփոխություններով:

Սպառողական գների հավելաճը 1996-2005թթ. նոյեմբերին
(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)




Սպառողական գների փոփոխությունները 2005թ. նոյեմբերին

(%)

	2005թ.				հունվար-նոյեմբերը 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը				
	2005թ. հոկտեմբերի նկատմամբ	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. նոյեմբերի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Սպառողական գների ինդեքս	101.1	97.6	99.8	109.2	100.7
<i>այդ թվում՝</i>					
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	101.5	95.5	98.8	111.2	100.9
ոչ պարենային ապրանքների	100.5	102.3	102.5	105.2	100.4
ծառայությունների	100.2	102.1	101.7	105.2	100.4

2005թ. հունվար-նոյեմբերին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.2%, ինչը 0.15 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (0.05%):

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2005թ. հունվար-նոյեմբերին (նախորդ ամսվա համեմատ, %)



Պարենային ապրանքների գներ: Պարենային ապրանքների շուկայում 2005թ նոյեմբերին հոկտեմբերի համեմատ գրանցվել է 1.6% գնաճ, ինչը դիտարկվող 13 ապրանքախմբերից 10-ում արձանագրված 0.1-10.0% գնաճի արդյունք է:


Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(%)

	2005թ.				հունվար-նոյեմբերը 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը				
	2005թ. հոկտեմբերի նկատմամբ	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. նոյեմբերի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	101.5	95.5	98.8	111.2	100.9
<i>Պարենային ապրանքներ</i>	<i>101.6</i>	<i>95.0</i>	<i>98.6</i>	<i>112.4</i>	<i>101.0</i>
հացամթերք	99.7	95.6	95.3	120.3	93.7
մսամթերք	100.4	103.2	105.0	125.7	104.2
ծկնամթերք	110.0	69.9	96.2	156.5	163.7
կաթնամթերք	101.0	100.5	102.3	107.5	103.5
ձու	103.9	87.4	97.0	118.0	104.8
կենդանական և բուսական յուղ	100.2	99.6	100.1	109.4	99.4

	2005թ.				հունվար-նոյեմբերը 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը				
	2005թ. հոկտեմբերի նկատմամբ	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. նոյեմբերի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
միրգ	107.6	73.5	79.3	97.9	102.9
բանջարեղեն և կարտոֆիլ	109.1	89.5	105.8	83.4	105.2
շաքարավազ	99.8	97.9	97.9	96.9	98.2
սուրճ, թեյ, կակաո	100.4	103.4	104.6	105.5	101.5
հրուշակեղեն	100.0	100.3	100.5	107.5	103.0
այլ մթերքներ	106.5	107.7	107.8	109.4	102.9
ոչ ոգելից խմիչք	100.1	105.6	106.2	116.1	106.8
<i>Ոգելից խմիչք և ծխախոտ</i>	<i>100.0</i>	<i>100.3</i>	<i>100.3</i>	<i>101.0</i>	<i>99.7</i>


Հացամթերքի, այդ թվում հացի և ալյուրի գների փոփոխությունները 2003-2005թթ. (2002թ. նկատմամբ, %)



Ձկնամթերքի ապրանքախմբում 2005թ. հոկտեմբեր-նոյեմբերին գրանցվել է 22.4% ընդհանուր գնաճ: Նոյեմբերին հոկտեմբերի համեմատ ձկնամթերքի գնաճը կազմել է 10.0%, ինչը հիմնականում պայմանավորվել է թարմ «սիգ» տեսակի ձկան 11.9% գնաճով: Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում ձկնամթերքի գներն աճել են 1.8-24.2% (գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Մարտունիում): Մայրաքաղաքում ձկնամթերքի գներն աճել են 8.7%, իսկ Կապան և Եղեգնաձոր քաղաքներում գրանցվել է համապատասխանաբար 2.6% և 2.1% գնանկում:


2005թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում արձանագրվել է 9.1% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է սմբուկի 2.1 անգամ, լուլիկի 1.9 անգամ, վարունգի 1.8 անգամ, կանաչ պղպեղի 1.7 անգամ, գլուխ սոխի 28.5% գնաճով: Սեղանի ճակնդեղի, գազարի, ծաղկակաղամբի, սխտորի գները նշված ժամանակահատվածում աճել են 1.1-7.4%, իսկ կարտոֆիլի գնանկումը կազմել է 1.8%: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում գրանցվել է բանջարեղենի և կարտոֆիլի 0.9-13.6% գնաճ, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վանաձորում: Մայրաքաղաքում բանջարեղենի և կարտոֆիլի գնաճը կազմել է 9.9%:

Բանջարեղենի գների փոփոխությունները 2003-2005թթ. հունվար-նոյեմբերին
(նախորդ ամսվա նկատմամբ, %)



Մրգի ապրանքախմբում 2005թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ գրանցվել է 7.6% գնաճ, ինչը տանձի 10.0%, խնձորի 11.1%, խաղողի 26.5%, ինչպես նաև բուստանային մշակաբույսերից՝ ձմերուկի և սեխի համապատասխանաբար 34.7% և 44.3% գնաճի արդյունք է: Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում արձանագրվել է մրգի 4.0-25.2% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է Հրազդան, Չարենցավան քաղաքներում): Մայրաքաղաքում մրգի գնաճը կազմել է 4.0%, իսկ ք. Եղեգնաձորում գրանցվել է 4.6% գնանկում:

Մրգի գների փոփոխությունները 2003-2005թթ. հունվար-նոյեմբերին
(նախորդ ամսվա նկատմամբ, %)



2005թ. սեպտեմբեր-նոյեմբերին հանրապետությունում գրանցվել է ձվի 14.6% ընդհանուր գնաճ, այդ թվում, նոյեմբերին հոկտեմբերի համեմատ ձվի գնաճը կազմել է 3.9%: Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում գրանցվել է ձվի 0.3-11.4% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք. Վաղարշապատում): Մայրաքաղաքում ձվի գնաճը կազմել է 4.3%, իսկ ք. Թալինում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Այլ մթերքի ապրանքախմբում 2005թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ գրանցված 6.5% գնաճը հիմնականում պայմանավորվել է աղի 10.2% գնաճով: Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում գրանցվել է աղի 5.2-20.0% գնաճ (համեմատաբար բարձր

գնաճ արձանագրվել է ք. Եղեգնաձորում): Մայրաքաղաքում աղի գնաճը կազմել է 9.7%:

Ոչ ոգելից խմիչքի, կենդանական և բուսական յուղի, սուրճի, թեյի, կակաոյի, կաթնամթերքի ապրանքախմբերում 2005թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ գրանցվել է 0.1-1.0% գնաճ, իսկ հրուշակեղենի, ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբերում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

2005թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ մսամթերքի ապրանքախմբում արձանագրվել է 0.4% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է տավարի մսի 1.1% գնաճով: Խոզի և ոչխարի մսի գները նշված ժամանակահատվածում նվազել են համապատասխանաբար 0.2% և 4.5%: Հանրապետության դիտարկված 6 քաղաքներում գրանցվել է մսամթերքի 0.1-0.7% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է մայրաքաղաքում), իսկ մյուս 4 քաղաքներում՝ 1.5-0.2% գնանկում:

Ոչ պարենային ապրանքների գներ. Ոչ պարենային ապրանքների շուկայում 2005թ. նոյեմբերին 2004թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 2.3% գնաճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.1% գնանկման դիմաց:


Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները (%)

	2005թ.				հունվար-նոյեմբերը 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը				
	2005թ. հոկտեմբերի նկատմամբ	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. նոյեմբերի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Ոչ պարենային ապրանքներ այդ թվում՝	100.5	102.3	102.5	105.2	100.4
հագուստ և գործվածք	100.7	99.4	99.3	99.1	97.8
վառելիք	103.5	110.9	115.7	149.7	118.0
կահույք	100.8	98.6	97.6	89.2	92.5
գորգեղեն	100.5	100.6	100.4	103.0	98.9
տեքստիլեղեն	99.8	99.7	99.7	98.8	100.6
կենցաղային էլեկտրաապրանքներ	100.1	98.9	96.6	89.0	93.7
խոհանոցային սպասք	100.1	100.8	100.5	100.1	98.3
լվացամիջոցներ	100.5	104.7	104.7	107.3	101.6
շինանյութեր	101.0	101.7	101.6	98.7	98.8
այգեգործական ապրանքներ	100.0	102.8	102.9	111.4	103.9
դեղամիջոցներ	100.1	96.9	96.6	89.9	97.0
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	99.1	112.2	112.8	140.8	107.2
մշակույթի ապրանքներ	100.3	99.3	95.9	85.1	89.6
գրեմական պիտույքներ	100.0	105.4	105.5	106.7	103.0
գեղահարդարման ապրանքներ	100.1	99.7	99.9	101.7	100.0
ոսկերչական ապրանքներ	101.0	101.8	102.9	126.4	97.0
անձնապիտո ապրանքներ	100.0	98.7	98.3	96.1	97.3

2005թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի համապատասխանաբար 0.6% և 3.9% գնանկում, իսկ 2004թ. դեկտեմբերի համեմատ՝ 15.5% և 7.2% գնաճ: Նոյեմբերին 2004թ. նոյեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի համապատասխանաբար 15.5% և 12.8%, իսկ 2002թ. համեմատ՝ 43.3% և 66.4% գնաճ:


Բենզինի և դիզելային վառելիքի գների փոփոխությունները 2003-2005թթ.

(2002թ. նկատմամբ, %)




Բենզինի ներմուծման¹ և մանրածախ² գների փոփոխությունները 2003-2005թթ.

(2002թ. նկատմամբ, %)



Դիզելային վառելիքի ներմուծման և մանրածախ գների փոփոխությունները 2003-2005թթ.

(2002թ. նկատմամբ, %)



¹ Ներկրվող բոլոր տեսակի բենզինների միջին կշռված գին:

² «Ռեզոլյար» տիպի բենզինի միջին գին:

Ծառայությունների սակագներ: 2005թ. նոյեմբերին 2004թ. դեկտեմբերի համեմատ բնակչությանը նատուցված ծառայությունների ոլորտում արձանագրված սակագների 2.1% հավելաճը 1.3 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (0.8%):

Բնակչությանը նատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

(%)

	2005թ.				հունվար-նոյեմբերը 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը				
	2005թ. հոկտեմբերի նկատմամբ	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. նոյեմբերի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Ծառայություններ, ընդամենը այդ թվում՝	100.2	102.1	101.7	105.2	100.4
կենցաղային բնույթի	100.4	103.2	103.2	100.1	101.0
բնակարանային-կոմունալ	100.0	101.5	101.3	104.5	101.4
բուժսպասարկման	100.8	100.7	100.8	99.7	99.6
տրանսպորտի	100.0	102.5	101.4	106.4	98.0
կապի	100.6	99.9	99.4	107.6	97.3
նշակույթի	104.9	108.6	116.2	165.4	115.2
կրթության համակարգի	100.5	105.8	105.1	107.9	101.5
հանգստի կազմակերպման	99.3	102.9	102.4	102.8	100.6
հանրային սննդի	100.8	103.0	103.3	116.2	104.8
իրավական և բանկային	100.0	101.1	101.1	101.1	100.5

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: Հանրապետությունում դիտարկված 9 քաղաքներում 2005թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ զրանցվել է սպառողական գների 0.4-1.8% գնաճ, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վանաձորում: Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 1.1%, իսկ ք. Դիլիջանում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

2005թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում դիտարկված քաղաքներից 9-ում պարենային ապրանքների գներն աճել են 0.2-2.5% (համեմատաբար բարձր գնաճ նկատվել է ք. Վանաձորում): Մայրաքաղաքում արձանագրվել է պարենային ապրանքների 1.6% գնաճ, իսկ ք. Դիլիջանում՝ 0.3% գնանկում:

Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2005թ. նոյեմբերի 30-ի դրությամբ

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
ՀՀ, միջինը	1453	1320	1652	627	528	251	131	247	74	287
<i>այդ թվում՝</i>										
Երևան	1483	1329	1668	635	535	250	140	259	76	296
Գյումրի	1388	1325	1650	657	533	256	103	219	56	311
Վանաձոր	1475	1225	1508	574	537	242	114	245	72	281
Վաղարշապատ	1460	1300	1600	560	500	250	140	274	58	320
Թալին	1500	1350	1750	610	500	250	130	200	80	250
Դիլիջան	1500	1225	1800	600	550	255	120	250	80	250
Հրազդան, Չարենցավան	1435	1385	1610	620	505	250	115	200	80	240
Եղեգնաձոր	1300	1300	1550	650	550	250	100	250	100	250
Մարտունի	1300	1300	1650	650	500	255	105	250	65	300
Կապան	1200	1320	1640	662	510	266	138	180	84	188
Արտաշատ	1400	1156	1600	589	500	250	135	240	70	250

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2005թ. նոյեմբերի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6570 դրամ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է մայրաքաղաքում՝ 6671 դրամ, իսկ ամենացածրը՝ ք. Կապանում՝ 6188 դրամ), ինչը 2.3% գերազանցել է նույնաժամանակաշրջանի 2004թ. նոյեմբերի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (6425 դրամ):

Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում 2005թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.1-1.2% գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Եղեգնաձորում: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գնաճը կազմել է 0.7%, ք. Թալիհում գրանցվել է 0.8% գնանկում, իսկ Հրազդան և Չարենցավան քաղաքներում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

2005թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետության դիտարկված 8 քաղաքներում գրանցվել է ծառայությունների սակագների 0.1-1.5% հավելված (համեմատաբար բարձր հավելված արձանագրվել է ք. Վանաձորում), ք. Մարտունիում՝ սակագների 1.1% նվազում, իսկ ք. Թալիհում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2005թ. նոյեմբերին 2004թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում				ծառայությունների
		սպառման ապրանքների	դրանցից			
			պարենային ապրանքների	ոգելից խմիչքի և ծխախոտի	ոչ պարենային ապրանքների	
ԴԴ, ընդամենը	97.6	96.6	95.0	100.3	102.3	102.1
<i>այդ թվում՝</i>						
Երևան	98.4	97.6	96.4	100.0	101.9	102.1
Գյումրի	97.2	96.6	95.1	100.3	101.5	99.8
Վանաձոր	97.6	96.3	95.0	102.2	99.6	103.7
Վաղարշապատ	95.2	93.7	90.7	100.8	104.2	102.2
Թալիհ	95.4	93.8	91.1	100.2	103.0	102.6
Դիլիջան	96.2	94.8	92.4	101.7	102.3	103.3
Հրազդան, Չարենցավան	97.0	96.0	93.6	100.0	104.4	101.5
Եղեգնաձոր	95.6	94.3	91.6	100.1	103.2	101.9
Մարտունի	96.5	95.4	93.1	99.7	103.8	101.3
Կապան	94.6	92.6	88.4	102.5	105.5	103.9
Արտաշատ	96.3	95.5	92.0	109.4	102.3	100.1

Արդյունաբերողների արտադրանքի գներ: 2005թ. նոյեմբերին 2004թ. դեկտեմբերի համեմատ արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գները հանրապետությունում նվազել են 5.7% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված 18.3% գնաճ):

Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի

	2005թ.			
	նոյեմբերը			հունվար-նոյեմբերը 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	2005թ. հոկտեմբերի նկատմամբ	2004թ. նոյեմբերի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Ամբողջ արդյունաբերությունը	100.8	99.8	148.8	108.9
<i>այդ թվում՝</i>				
էլեկտրաէներգետիկա	100.5	100.5	97.9	97.9
գունավոր մետալուրգիա	99.3	101.2	327.6	136.3
քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն	100.7	99.2	128.9	100.1


	2005թ.			հունվար-նոյեմբերը 2004թ. հունվար- նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը			
	2005թ. հոկ- տեմբերի նկատմամբ	2004թ. նոյեմբերի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
մեքենաշինություն	93.6	101.4	106.1	106.1
այլ արդյունաբերական արտադրու- թյուն(ոսկերչական արդյունաբերություն)	104.5	98.5	116.3	98.7
անտառային, փայտամշակման, թղթի- ցելյուլոզի արդյունաբերություն	103.9	111.7	105.6	104.6
շինանյութերի արդյունաբերություն	105.7	124.2	130.9	107.4
թեթև արդյունաբերություն	100.2	103.4	103.7	103.8
սննդի (ներառյալ ալյուրի ու համակց - ված կերերի) արդյունաբերություն	102.8	95.9	117.6	95.0
պոլիգրաֆիական արդյունաբերություն	92.0	108.9	112.2	88.3

Բեռնափոխադրումների սակագներ: 2005թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ բեռնափոխադրումների սակագների հավելաճը հանրապետությունում կազմել է 1.0%, ինչը մեծապես պայմանավորվել է երկաթուղային (2.5%), օդային (2.0%), խողովակաշարային (1.5%) տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների հավելաճով: Ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նշված ժամանակահատվածում նվազել են 1.5%:

2005թ. նոյեմբերին 2004թ. նոյեմբերի համեմատ բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 94.0%, այդ թվում, երկաթուղային տրանսպորտով՝ 89.7%, ավտոմոբիլայինով՝ 105.3%, օդայինով՝ 101.5%, խողովակաշարային տրանսպորտով՝ 90.0%, իսկ հունվար-նոյեմբերին նախորդ տարվա հունվար-նոյեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 89.2%, 84.7, 108.6, 88.7, 87.7%:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գներ: 2005թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված գյուղատնտեսական մթերքի 2.5% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է իրացվող ապրանքների սեզոնայնությամբ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գնաճը կազմել է 0.4%): Գյուղատնտեսական մթերքի գնաճի առավել բարձր ցուցանիշներ արձանագրվել են Արմավիրի և Արարատի մարզերում, կազմելով համապատասխանաբար՝ 8.0% և 7.4%:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսները ՀՀ մարզերում 2005թ. նոյեմբերին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի (նախորդ ամսվա նկատմամբ, %)



1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2005թ. նոյեմբերին 2004թ. նոյեմբերի համեմատ գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը կազմել է 101.4%, այդ թվում, բուսաբուծական մթերքինը՝ 93.0%, անասնապահական մթերքինը՝ 107.1%, իսկ հունվար-նոյեմբերին 2004թ. հունվար-նոյեմբերի համեմատ նշված ինդեքսները կազմել են համապատասխանաբար՝ 89.3%, 72.5 և 105.9%:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման միջին գները 77-ում 2001-2005թթ. նոյեմբերին

(դրամ)

	Չափի միավորը	2001	2002	2003	2004	2005
Ցորեն	կգ	94	80	127	107	84
Գարի	- ,, -	74	76	99	98	85
Լոբի	- ,, -	422	369	386	393	413
Կարտոֆիլ	- ,, -	96	121	92	75	76
Կաղամբ	- ,, -	30	43	39	36	57
Գազար	- ,, -	47	49	89	60	64
Գլուխ սոխ	- ,, -	94	77	150	150	186
Խնձոր	- ,, -	113	128	143	163	131
Տանձ	- ,, -	116	131	127	205	144
Խաղող	- ,, -	153	188	207	190	265
Սեղր	- ,, -	2706	2477	2421	2562	2542
Միս տավարի	- ,, -	824	849	935	1026	1113
ոչխարի	- ,, -	799	859	898	1014	1137
խոզի	- ,, -	1011	877	1033	1470	1589
Կաթ	լ	119	114	115	107	107
Պանիր (յուղոտ)	կգ	825	755	797	887	904
Մածուց	լ	187	175	180	184	176
Չու	հատ	44	46	46	47	46
Միամյա խոտեր	կգ	21	22	28	23	23
Բազմամյա խոտեր	- ,, -	23	30	31	31	30

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներն ըստ մարզերի

(%)

	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը			Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը		
	2005թ. նոյեմբերը		2005թ. հունվար-նոյեմբերը 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ	2005թ. նոյեմբերը		2005թ. հունվար-նոյեմբերը 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	2005թ. հոկտեմբերի նկատմամբ	2004թ. նոյեմբերի նկատմամբ		2005թ. հոկտեմբերի նկատմամբ	2004թ. նոյեմբերի նկատմամբ	
77, ընդամենը	102.5	101.4	89.3	99.1	105.8	106.7
այդ թվում՝						
Արագածոտն	107.0	101.2	99.6	99.2	109.1	107.1
Արարատ	107.4	102.3	85.3	100.9	107.4	103.9
Արմավիր	108.0	99.6	70.1	100.2	106.5	103.0
Գեղարքունիք	101.5	99.9	105.2	100.5	108.6	107.9
Լոռի	99.5	104.8	100.2	97.9	102.2	104.5
Կոտայք	104.9	107.0	92.8	100.0	114.4	111.4
Շիրակ	105.9	108.1	100.3	101.1	98.2	102.9
Սյունիք	102.7	108.4	103.2	104.1	111.5	111.0
Վայոց ձոր	97.7	107.2	106.3	99.3	114.4	110.1
Տավուշ	103.7	107.0	104.9	99.6	106.5	108.6